

9693

334
M-51

2001

2010

Վ. Վ. ԽԻԺՆԵԱԿՈՎ.

300

1327-րդ

Տարբառապետություն

մը

ԿՈՐԵՐԱՑԻԱՆ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԻՑ

334
Խ-51

ՅԵՍՈՅ

ՀՀՀ
100
111

Թարգ. ռուսերենից

Ա. Պ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴՐԱՄ

ՊՈԼԻЧՎԱ ԲՈՅԼ

7/11. 1922

Ա. ԱՅՆՎԱ. ԽԵՆՔԻ

Ա. ԱՅՆՎԱ. ԽԵՆՔԻ

Հրատարակութիւն Մերձ-Կասպիական Խօսքի բաժանութիւն
Միութեան Լուսաւորական Բաժանմունքի.

№ 2.

Բ. Ա. Գ. Ռ. Ի.
Տպարան «Տրուժենիկ» Ա. Ա. Կուլիշի
1917

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1000FORM8HMR

ପ୍ରମାଣିତ କାନ୍ତିକାଳୀନ ମହାକାଵ୍ୟ

8928

Կ 00ՊԵՐԱՑԻԱՆ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ.

Երբ բռնկւեց յեղափոխութիւնը, ինձ
վիճակւեց, ի միջի այլոց, քրքրել Մոսկուա-
յի նահանգական ժանդարմական վարչու-
թեան գործերը, այսինքն՝ այն հիմնարկու-
թեան, որի նշանակութիւնն էր պահել եւ
պահպանել բռնութեան և խարեւայութեան
նախկին կազմը:

Թերթելով ոստիկանութեան Դեպար-
տամենտի բազմաթիւ շըջաբերականները,
ուղղւած զանազան հարցմունքներով նա-
հանգական ժանդարմական վարչութեանը,
աչքի անցկացնելով ժանդարմական ենթա-
սպաների (յնտերъ-օֆիցերъ) առաւել բազմա-
թիւ զեկուցումները իրենց փոխ-գնդապետ-
ներին (подполковникъ), այս վերջինների
զեկուցումները ժանդարմական գեներալին՝
նահանգգական վարչութեան պետին և այդ
գեներալի զեկուցումը ոստիկանութեան

Դեպարտամենտին, ես զարմացայ ժանդարմական աստիճանաւորների դէպի կօօպերացիան ունեցած ուշադիր վերաբերմունքից։ Նրանք նրան հետևում էին անխոնջ կերպով, կազմելով կօօպերատիվների վարչութիւնների և խորհուրդների կազմերի ցուցակները և գրի առնելով նրանց կեանքի աչքի ընկնող դէպքերը։ Կօօպերացիայի համար ժանդարմներն ունէին յատուկ «տեղեկաբերներ», որոնց երբեմն նոյն իսկ վճարում էին, ինչպէս վճարւած է (25 ր.) միայն մի տեղեկութեան համար Ռուզմկովերէյեան միացեալ միութեան 1916 թւի գործունէութեան մասին, որով տեղեկութիւն է տրում միութեան վարչութեան կազմի, նրա ծառայողների և նրա պարենաւորման գործունէութեան մասին։

Ինչու ժանդարմները այդպէս հետաքրքրւելիս են եղել իր առևտրական գործով խաղաղ գրադւող կօօպերացիայով։

Դրա պատճառն այն է, որ կօօպերացիան կազմակերպում էր ազգաքնակչութիւնը և վարժեցնում նրան հասարակական գործունէութեան։ Իսկ ազգաքնակչութեան կազմակերպումը ամենամեծ վտանգն էր հին կազմի համար։ Քանի ժողովուրդը նմանւում էր մարդկային բաժան-բաժան

եղած փոշուն, նա վտանգութիւնը չէր բռնկալութեան համար, այդպիսի ժողովրդին դժւար չէր թեքել ցանկացած կողմը վախ էր ազգում միայն ժողովրդի կազմակերպւած լինելը, որովհետև ժողովրդի ոյժը նրա կազմակերպւած լինելու մէջ է։ Եւ որչափ շատ էր ժողովուրդը կազմակերպւում, այնչափ շատ էր սարսափում բռնակալութիւնը, և այնչափ եռանդուն կերպով պէտք է ժանդարմներն ու պահնորդները (օքրաննու) հետեւին ժողովրդական կազմակերպութիւններին։ Եւ նրանք հետևում էին, հաշւի առնելով կօօպերացիայի աճող ոյժը։ Սակայն նրանք կօօպերացիային ոչինչ չը կարողացան անել, որովհետև նրանք գործունէին մի այլ վտանգի հետ ևս։

Անբաղդ և տնտեսապէս թոյլ ժողովուրդը շատ դժւար էր ապրում, բռնակալութիւնը շարունակ սարսափի մէջ էր, աչքի առաջ ունենալով նրա վրդովման հնարաւորութիւնը։ Առանձնապէս զրութիւնը սուր կերպարանք ստացաւ վերջին տարում, երբ կենսական մթերքների պակասութիւն զգացւեց։ Ժողովրդի առաջ ցցւեց սովի ուրուականը։ Իսկ տիրողների առաջ սովային ընդգրումների ահը։

Ուստի՝ ժանդարմները իրենց զեկուցում՝
ների մէջ, տեղեկացնելով իշխանութեանը
անընդհատ աճող կօօպերատիվ շարժման
մասին, միաժամանակ շեշտում էին.

«Պարենաւորման հարցը խիստ հրա-
տապ է և անչափ վրդովում է ազգաբնակ-
չութեանը։ Եթէ ըլ յինէր կօօպերացիան, դրո-
րինը առաւել վատրար կը յինիք։ Նա անհա-
ժեշ է ազգաբնակչութեան համար։»

* * *

Եւ ահա առաջացաւ յեղափոխութիւնը։
Նա առաջացաւ միանգամից ոչ միայն Փետ-
րոգրադում, այլ ողջ երկրում։ Կօօպերա-
ցիայի շնորհիւ կազմակերպման ընտելա-
ցած ժողովուրդը հեշտութեամբ թեքւեց
նոր կազմի կողմը, որպիսի հանգամանքը մի
անգամ ևս ընդգծեց կօօպերացիայի ծառա-
յութիւնը հայրենիքի հանդէպ։

Սկսւեց նոր կեանք։ Փոխւեցին բոլոր
էին իշխանութիւնները, բոլոր մարդիկ, որոնք
նեցուկ էին բոնութեան կամ որոնք իշ-
խում էին ոչ ըստ իրենց օգտակար ծառա-
յութեանց, այլ միայն շնորհիւ իրենց ար-
տօնեալ վիճակի։ Պաշտօնանկ եղան ժան-
դարմները, ոստիկանութիւնը, գաւառա-
պետները, ազնուականութեան պարագլուխ-
ները և գաւառական վարչութիւնների շատ

նախագահ ներ ու անդամներ։ Տարօրինակ
բան. հին իշխանութիւնների անկման հետ
միաժամանակ մի քանի վայրերում սկսե-
ցին փոխել նոյնպէս և կօօպերատիվների
վարչութիւններին։

Վերաբերմունքը դէպի կօօպերացիան
գրեթէ ամեն տեղ փոխւեցաւ։ Առաջ կօօ-
պերացիայի հետ կապում էին ամեն լաւ
բան, այժմ սկսեցին նրան վերագրել ան-
չափ վատ բաներ։

* * *

Վերջին տարւայ պարենաւորման քայ-
քայման ժամանակ կօօպերացիայի վրայ
դրւեցաւ նոր պարտականութիւնների ծանր
բեն։ Վարկային ընկերութիւնները, և
յատկապէս սպառովական ընկերութիւնները,
հարկադրւած եղան իրենց վայրերում ըզ-
բաղւելու պարենաւորման գործով, ըստ
որում նրանք պարտաւոր էին նոգ տանել
ոչ միայն իրենց անդամների, այլ նաև
շրջակայ ողջ ազգաբնակչութեան մասին։
Մթերքների սակաւութեան պատճառով
մասնաւոր առևտուրը գնալով սկսեց պակա-
սել, և շատ վայրերում ազգաբնակչութեանը
մթերք հայթիայթելու գործը ամբողջովին
անցաւ կօօպերացիայի ձեռքը։

Սակայն կօօպերացիան ազգաբնակչութեանը մթերք հայթհայթելու պարտականութիւնը ստանձնեց դժւար պայմանների մէջ, երբ մթերքների բերումը բաւարար չէր, երբ մթերք առնելը խիստ դժւար էր և երբ առաւել դժւար գործ էր գնածի տեղ հասցնելը, որովհետև երկաթուղիները պատերազմի պատճառով խիստ վատ էին գործում:

Կօօպերացիան արաւ, ինչ կարող էր, բաշխելով ազգաբնակչութեանը հայթհայթած մթերքները: Վատ պայմանների մէջ էր դրւած այդ գործը, սակայն կասկածից վեր է, որ առանց կօօպերացիայի նա առաւել վատ կը լինէր, որովհետև առանց նրան խիստ անկանոն կը լինէր բաշխումը, ոմանց շատ մթերք կը համանէր, քան միւսներին, ոմանք առատութեամբ կը վայելէին, մինչդեռ ուրիշները սովամահ կը դառնային:

Անգամ ժանդարմները ի զուր չէին ընդունում կօօպերատիվ կազմակերպութիւնների օգտակարութիւնը ազգաբնակչութեան համար:

* * *

Այժմ ամեն կողմից լուրեր են հասնում, որ ազգաբնակչութիւնը սկսել է վատ

վերաբերւել դէպի կօօպերացիաները, փոխելով կօօպերատիվ ընկերութիւնների դեկավարներին:

Երբեմն ազգաբնակչութիւնը առանձին անձնաւորութիւնների վերաբերմամբ շատ արդար է վարւել, երբ յայտնւել է, որ այս կամ այն սպառողական ընկերութեան վարչութեան անդամները մէջօկներով ալիւր են թագցրել անձնականապէս իրենց համար: Այդպիսի անպէտք մարդկանց, անշուշտ, հարկաւոր էր փոխել, և միայն ցաւել կարելի է, որ նրանք առաջուց ընտրւել են իրենց պաշտօններում: Սակայն երբեմնակի տեղի ունեցող այդ դէպքերը չեն, որ ծառայում են որպէս պատճառ ազգաբնակչութեան՝ դէպի կօօպերացիան տածած վերաբերմունքի ընդհանուր փոխւելուն:

Դրա պատճառը պէտք է համարել այն, որ կօօպերացիան զբաղւել է մթերքների բաշխման գործով, և որովհետև պարենաւորման գործը դրւած է եղել և ներկայումս էլ դրւած է վատ պայմանների մէջ, ուստի ազգաբնակչութիւնը, չը գտնելով այլ բացարութիւն, սկսել է մեղադրել կօօպերացիան՝ պարենաւորման բայթայման գործում:

«Դու ինձ սովամահ արիր»—ասում էր մի զիւղացի կօօպերատիվի վարչութեան ինձ ծանօթ անդամին՝ ընտիր մարդուն և կօօպերատօրին, որը ուղղամտօրէն աշխատում էր պարենաւորման գործում, ջանք թափելով որչափ կարելի է շատ մթերք հասցնել և ըստ հնարաւորութեան արդար կերպով նրանց բաշխել:

Սակայն, չը նայած թափած ջանքի՝ մթերքը խիստ սակաւ էր: Եւ ահա պատրաստ է մեղաղբանքը. «Դու ինձ սովամահ արիր», — իսկ զրան հետեւում է գործողութիւնը. «հեռացիր»:

Այդօրինակ տրամադրութիւնից այժմ օգտաւում են կօօպերացիայի թշնամիները՝ վաճառականները, որոնց կօօպերացիան թոյլ չէ տւել վաճառելու խարեբայական արժէքներով և միաժամանակ գնորդներին չափի և կշռի մէջ խարելու: Նրանք բորբոքում են կրքերը, թունաւորելով կիսագիտակից ազգաբնակչութիւնը դէպի կօօպերացիան, զրպարտում են նրա գործիչներին և չեն քաշւում ժողովրդի առաջ ստելու, որ իրը իրենք աւելի լաւ առաջ կը տանեն պարենաւորման գործը, որը այժմ չէ կարելի ընդհանրապէս յաջող կերպով պարել:

Ներկայումս կենսական մթերքները դարձել են պետական մենաշնորհի առարկայ. ոչ վաճառականները և ոչ էլ կօօպերատիվները չեն կարող ինքնազլուխ գնումներ կատարել: Բոլոր մթերքները պատկանում են պետութեանը, որը տարբեր վայրերում բաց է թողնում նրանց պարենաւորման կօմիտէներին:

Մենաշնորհը վաճառականներին դիւր չէ գալիս: Սակայն մինչև մենաշնորհը նըրանք նոյնպէս չէին կարողանում մթերք հասցնել: Օրինակ, Վոլոկոլամեան գաւառում անցեալ ձմեռը վաճառականներին թոյլատրած էր 155 վագօն բերելու, ոակայն նրանք կարողացան բերել 10 վագօնից էլ պակաս:

Այդպիսով՝ վաճառականները ստում են, երբ մեղաղբում են ազգաբնակչութեանը վատ պարենաւորելու մէջ կօօպերացիան, իսկ այժմ-հացի մենաշնորհը և պարենաւորման կօմիտէներին:

Կենսական մթերքներից շատերի, ինչպէս մանուֆակտուրի, սապոնի, նաևթի և այլն վրայ մենաշնորհ չէ նշանակւած: Իսկ վաճառականները այդ ապրանքներից շատ ունեն, արդեօք նրանք կարող են նրանցով ապահովել ազգաբնակչութիւնը: Այսպիսով՝

Եթէ կենսական մթերքների ազատ առևտուրը նոյն իսկ վերականգնելը, նրանց հայթհայթելը դժւար թէ յաջող լինէր, իսկ վաճառականների ձեռքով նրանց բաշխումը ամենայն հաւանականութեամբ առաւել վատթար կը լինէր, քան ներկայումս:

* * *

Կօօպերացիան առաջ անհրաժեշտութիւն էր և այժմս էլ կը մնայ անհրաժեշտութիւն. այժմ, շատ կարելի է, առաւել անհրաժեշտ է, քան թէ եղել է անցեալում:

Նա օգնում է ազգաբնակչութեան տրնտեսութեան, արհեստի և պարենաւորման գործերի յաջող վարելը: Նա թոյլ չէ տալիս, որ միջնորդ-վաճառականները ժողովրդական կարիքի հաշվին հարստութիւն դիզեն:

Հողագործներին, արհեստաւորներին, տնայնագործներին և բանւորներին միաւորելով ընկերութիւնների մէջ, նա նրանցից ստեղծում է ոյժ՝ տնտեսական պայքարի համար:

Դրամագլուխ չունեցող մանր գործատէրերը իրենց տնտեսութիւնը յաջող կերպով կարող են վարել միայն վարկային ընկերութիւնների օգնութեամբ, որոնք այդ դրամագլուխը արամադրում են նրանց: Տնայնագործներն ու արհեստաւորները յա-

ջողութեամբ կարող են գործել, եթէ միայն միանան և կազեն մասնաւոր ընկերութիւններ, առանց որոնց նրանք հարկադրւած են ստրուկ լինելու առնողներին և գործատէրերին: Գիւղատնտեսութիւնը յաջող կերպով վարելու համար անպայման պահանջում է կազմել կօօպերատիվ ընկերութիւններ և արտելներ՝ միահամուռ ոյժերով գիւղատնտեսական իրեր գնելու համար, միահամուռ ոյժերով գիւղատնտեսութեան արդիւնքը սպառելու և նրանց մշակելու համար: Յատկապէս զգացւում է կօօպերացիայի անհրաժեշտութիւնը հողային բարենորոգման և յօգուտ աշխատաւորութեան սպառելիք մեծ բարենորոգման ժամանակ:

Կազմակերպելով տնտեսական կեանքը, կօօպերացիան իր զեմօկրատիական սկրզբունքներով ընտելացնում է ազգաբնակչութիւնը հասարակական և պետական կեանքի ձից կազմակերպումին:

Նրանք, ովքեր անդամ են կօօպերատիվ ընկերութիւնների և արտելների, հաւասար իրաւունք և պարտականութիւն ունեն և համահաւասար կերպով կարող են մասնակցել կօօպերատիվ գործի բարեկարգումին: Եւ եթէ որ և է կօօպերատիվ վատ-

Է գործում, այդ բանում յանցաւոր են նրա բոլոր անդամները:

Սակայն որովհետև սպառողական ընկերութիւնների անդամ կարող են լինել անխտիր բոլոր սպառողները, իսկ վարկային ընկերութիւնների անդամ կարող են լինել որ և է անտեսութիւն կամ արհեստ ունեցողները, ուստի՝ եթէ ընկերութեան գործը վատ է ընթանում, յանցաւը է ինքը ազգաբնակչութիւնը:

Զենք բերւած ազատութիւնը ինքնին լաւ կեանք չը ստեղծեց: Նա միայն ստեղծեց այդ կեանքի կազմակերպութեան վրայ թափելիք արդիւնաւէտ աշխատանքի համար պայմաններ: Փլած է հին շէնքսը, որի փոխարէն պէտք է կառուցանել, յամառ և անդուլ աշխատանքով, ոոր շէնքս: Այդ շէնքսի իւրաքանչիւը քարը քարի վրայ դնելու համար պահանջնում է ամենքի և իւրաքանչիւրի հսկայ աշխատանքը:

Ներկայ մեր իրականութիւնը նման է աշխարհի ստեղծագործութեան առաջին օրին, որի մասին աստուածաշնչում գրւած է.

«Երկիրը անկերպարան էր, ամայութիւնն ու մոռայլը թագաւորում էին անդունդի վրայ և Աստուծոյ հոգին շրջում էր ջրերի վրայ»:

Այժմ ամենքի վրայ շրջում է ազատութիւնը, սակայն մոռայլ է վիճը, որի մէջ կարող է գահավիժւել մեր հայրենիքը, եթէ մենք նրան դուրս չը բերենք քաօսից:

Կառուցէք նոր լուսաւոր կեանք և կառուցէք այն կօպերացիայի օգնութեամբ:

Որովհետև ոյժը—միութեան մէջ է:



— 61 —

— ասուր է Խաչք բայի պատմութեալ
Քն գոյ ցըսի Է պահ օհուու ուշով
ԱՅս պատմութեալ զն թափքանու Է բառայ
ուղարկու գուզեց ու ուղարկու մայի զնեա
ու ու զնեա զնուու զն զնուու
ուղարկու խաչքանու զն զնուու
և Քն մատենու զն զնուու

2013

«Ազգային գրադարան»



9643
NL0042513

